ՇԵՆԳԱՎԻԹԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարի 2016թ. փետրվարի 11-ի թիվ 25-Ն հրամանը. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Շենգավիթ վարչական շրջանի սոցիալական աջակցության տարածքային բաժինը /այսուհետ՝ ՍԱՏԲ/ սոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով Երևանի տարածաշրջանում Համաձայնագրի կողմեր հանդիսացող սուբյեկտներին՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններին. տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց /այսուհետ՝ Կողմեր/ հրավիրվում են հայտագրվելու և ձևավորելու համակարգող խորհուրդ /այսուհետ՝ Խորհուրդ/:

Խորհրդի կազմում պարտադիր ընդգրկվում են տարածաշրջանում գործող, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 1061-Ն որոշման 1-ին կետով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների մեկական ներկայացուցիչներ, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ներկայացուցիչներ և ֆիզիկական անձինք:

Խորհուրդը գործելու է խորհրդի անհատական կազմը ձևավորվելուց հետո 2 տարի ժամկետով:

Կողմերը խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ իրենց առաջարկությունները հայտերը կարող են ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Շենգավիթի ՍԱՏԲ մինչև 2016թ. հուլիսի 6-ը /հասցեն՝ ք. Երևան Գ. Նժդեհի 15, հեռ. 011-518809/:

Հայտագրման համար ներկայացվող նվազագույն պահանջներն են.

ա. սոցիալական աջակցության բնագավառում գործունեության փորձը
բ. սոցիալական ծառայութունների տրամադրման ծրագրերի իրականացումը

Գործընթացի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներառված է Տարածքային մակարդակով սոցիալական համագործակցության Համաձայնագրով, որը տրամադրվում է Սոցիալական համագործակցության Համաձայնագրին միացած կողմերին:

Երևանի քաղքապետարանի աշխատակազմի Շենգավիթի սոցիալական աջակցության տարածքային բաժին: